զանանաց Ջ. բարեկիր գաւառական, Ս. Յակոբոյ վանուց վանահայրութեան պաշտօնին մէջ վերատին կարգելոյ աղագաւ։

26՝նոյ։ Մ. Բարսեղ Սանահնոյ վանուց Երէց. Ամենայն Հայոց Կարգապետ՝ Ս. Յովհան Օձնեցւոյ մենաստանին Հայանահայր կարգեցաւ, յիշեալ վանքը նոր 'ի նորոյ զարգարելու համար՝ ազատելով միանգամայն ցարդ վիճակեալ ամբաստութենէն։

21. — Ամճիշարու և Խաչ գիւղօրէից ծխական քահանայն Գրիգոր Ր. փարգապետեան, Պ. զլաբ քաղաք երթալ ձեւացուցած և անցագիր ստացած, խաբերայութեամբ ասա և անդ թափառելով՝ իւր պատուոյն և կոչման անվայել վարքով և մոլեգնութեամբ ողորմութիւն հաւաքած է։ Ուստի վերամնայ ժամանակաւ արգիլեցաւ քահանայագործութենէ և ենթարկեցաւ ապաշխարանաց տակ՝ ուրիշ քահանայի հովուութեան յանձնելով նորին ժողովուրդը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՆԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն և վերջ)։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

2. ՀՈՍՈՒՄՆ ԱՐԵԱՆ ԴԷՊԻ ԳԼՈՒԽԸ։

Առաջին մասնում արդէն ասացինք, որ պղպանոցի երկար ժամանակ կախ պահելը առաջացնում է արեան հոսանք դէպի գլուխը։ Եւ այդ իրողութեան բացատրութիւնը տեսանք վերի երակների սեղմուելում, որով արեան վերադարձը գլխից դէպի կուրծքը յամենում է և հարկաւ առաւել ուժգին ծաւալում է գլխի կողմերում։ Նեղ հագուստը, 'ի հարկէ, նոյն հետևանքը պէտք է յառաջ բերէ, որովհետև նոյնպէս սեղմում է երակները։

Այսպէս ներգործող ուրիշ հանգամանքներ ևս կան։ Երբեմն որ գլուխը ծռում է սեղանի վրայի գիրքը կարդալու՝ նա հարկաւ կասում է և մէջքը. այս դրութեան մէջ նորա փորը ծալվում է և սեղմվում, որով փորի ներքինները ճնշում են դէպի վեր տրամաթաղանթի (1) վերայ, և արգելելով նորա գործունէութիւնը՝ դժուարացնում են շնչառութիւնը. ամեն մարդ իր փորձէն գիտէ թէ՝ կանգնացնում է դարձեալ արեան արագ վերադարձը գլխից դէպի կուրծք։

Այս բանը կրկին նստարանների փոփոխութիւն է պահանջում։

Դարձեալ մի հանգամանք բերենք։ Երբեմն որ ստիպուած է լինում մեծ ուշադրութիւն ունենալ մի բանի, նորա շնչառութիւնը բնականաբար և աննկատելի կերպիւ քանի գնում՝ պակասում է։ Ուզելի այս ազդեցութիւնը շնչառութեան վերայ ամեն մարդ կարող է իւր սեփական անձի վերայ փորձել, երբ մի բան է լսում խորին ուշադրութեամբ, միայն թէ աշխատի նկատելու. ձայնով կարդալու ժամանակ այս բանը այնքան շուտ չի երևում (որովհետև

(1) Սա բաւականին հաստ մասնաւոր թաղանթ է, որ կուրծքի եւ փորի մէջ տեղը դմբէթի նման քաշուած լինելով, բաժանում է փորոտիքը թոքերէն եւ սրտէն, եւ էնդուր էլ մերոնք երբեմն անուանում են զորան «Սրտի ներքոյ». Այս առաղաստի վեր եւ վար իջնելովն է, որ գլխաւորապէս մեր թոքերը լայնանում (օդ ծծում) եւ սեղմուում են (օդը արտաշնչում) — Ահա այս է եւ շնչառութիւնը

կարդալիս մարդ յարաժամ շնչափոխութեան մէջ է), որքան ուշադրութեամբ մի բան լսելու ժամանակ։ Եւ ոչ է տեսել թէ այսպիսի լսելուց յետոյ երեխէքը սկսում են սաստիկ յօրանջել, որով ուշադրութեան ժամանակ թոքերում պակասած օդը բնաւորէն ստիպուած են շատ խորը և լիակատար շունչ քաշելով լցուցանել. և ահա այս է յօրանջելը (օրաշտաւ)[1]։

Այս բոլոր հանգամանքների արտայայտած արեան հոսանց մենք «մեքենայական կամ կրաւորական» անուն ենք տալի. որովհետև դոցա առիթն է դլխաւորապէս արեան դարձի արդելուիլը և նորա յամենալը մարմնոյ այս և այն մասում, ինչպէս վերը բացատրեցինք, և տեսանք եւս թէ՝ դոքա տեղեր են գտանում ուսումնարանաց մէջ՝ ուսուցիչների ԱՐՈՂՋԱՊԱՀՈՒՆ ասուած բանին

(1) ԵԹԷ երկար ուշադրութեան ժամանակ ազատ շնչաւորիւնը արդելուած է լինում ուրեմն վերը ասածին համեմատ, արեան դարձը ուշանում է եւ գլուխը դարձեալ արիւնով առատանում է կամ լցվում։ Այս բանը շատ որոշեալ եւ հասկանալի պահանջմունքի տեղի է տալի, այն է, թէ ուսուցիչները պարտական են իւրեանց դասախօսութիւնը զանազանակերպել մերթ երեխի ուշադրութիւնը գրաւելով եւ լսել տալով, մերթ նորան ինքեան խօսացնել տալով, մերթ կարդացնելով, եւ մերթ հէնց իսկ դասախօսութեանց ժամանակ մարմնամարզութիւն անել տալով մի 5—10 րոպէ, ինչպէս ազ սովորութիւն է Գերմանիոյ շատ ուսումնարանաց մէջ։ Միով բանիւ, դասախօսութեան մէջ կեանք եւ կենդանութիւն պիտի երեւի եւ ոչ մեռելութիւն եւ գերեզմանք։

Այս հանգամանքները եւ նկատողութիւնները, որ մենք բերում ենք, դուցէ մեր ընթերցողներից շատին մանր եւ չնչին, ուրեմն աւելորդ երեւին, բայց մենք կը խնդրենք մեր ընթերցողէն մի բան աչքէ չթողնել, այն թէ, այդ հանգամանքները ՅՐԱՎԼ ներգործում են եւ Դ ՄԲՈՂՋ ԵՐԻՏԷ ՎԵՐՑ, այն ժամանակը հետեւանքի մեծութիւնը եւ չափը յայտնի կը լինի։

ամենեւին միա չը դարձնելուցը և նորա կոնոներին չը հետևելուցը։ Այժմ տեսնենք՝ թէ ուսումնարանը չունի՞ արդեօք բաւականին հանգամանքներ և առիթներ «ներգործական» ասուած արեան հոսանաց համար։ Նախ և առաջ՝ երեխի ուղեղը սաստիկ, անկանոն և անժամանակ աշխատեցնելը(2)։

Ուղեղը բաղմաղան ջիղերի միջոցաւ այնպիսի մի սերտ կապակցութիւն ունի արեան անօթների հետ, որ կարող է ոչ միայն սրտի գործունէութիւնը զօրեղացնել և արեան շրջումը սաստիկ արագացնել, այլև կարող է լայնացնել՝ զորօրինակ՝ մեր մազի զարկերակները (քներակը), որև արեան ալիքը առատութեամբ պիտի ընթանան այդպէս լայնացեալ խողովակների միջոցաւ և ուռոցն ուղեղը և ամբողջ գլուխը։ Այդ ջղային հոսանաց անմիջական երևոյթներն են, որ դժուար մտաւորական աշխատութիւնից յետոյ՝ երեխի երեսը՝ աչքերը և ականջները կարմրում են և սաստիկ տաքանում, ականջների օդատեղը որ՝ կ'ասես թէ էրվում են։ Բայց երբեմն ընդհակառակը կը պատահի, մանաւանդ կրաւորական հոսանաց ժամա-

(2) Այս տեղ մի նկատողութիւն եւս։ Ոչ մի դաստիարակ կամ ուսուցիչ մատողահաս երեխի մեռը կամ մէջքը չի տալ մի 5—6 փթանոց ծանրութիւն, որովհետեւ հասկանում է թէ, երեխի մկանունքը անզօր են այդպիսի մի ահագին ծանրութիւն վերցնելու։ Ամենայն ծնող կամ դաստիարակ կարդիլէ երեխին անմարս խորտիկներով եւ կերակուրներով, եւ այն էլ չափից դուրս, ստամոքսը լցնել. որովհետեւ դորա հետեւանքն եւս յայտնի է, տկարութիւնք ստամոքսի եւ առոյգութեան խանգարումն։ Հապա ինչու է որ միեւնոյնը չ'են մոռածում ուղեղի համար, չէ՞ որ նա էլ մեր կազմուածքի գործարաններից մինն է, որպէս մսանքը, ստամոքսը եւ այլն։ Չէ՞ որ նորան երկարեւ ուժգին աշխատեցնելով, դժուարամարս անհասկանալի գաղափարներ նորա մէջ զօրագի խցելով, մենք ինքներս թուլացնում ենք նորան եւ երբեմն երեխին ապուշ շինում։

նակ։ Այս գիպուածում գլխի տաքութիւնը և ծանրանալը, աչքերի մի փոքր մթնելը ապացոյց են թէ այտերի գունաթափութիւնից չը պէտք է խաբուիլ, այլ պէտք է մտածել՝ արեան հոսանքը գլխի ուղեղը այնքան սաստիկ է, որ երեսի արիւնն էս ծառալում է այն տեղ։

Այս մեր նկարագրած թէ՝ կրաւորական և թէ՝ ներգործական արենաբաշխութեան անկանոնութիւնը կամ անհաւասարութիւնը շատ, երբեմն յաբտաև տկարութիւններ է ծնուցանում երեխայից մէջ։ Այդ տկարութիւններից երեքը միայն վիճակագրական հետազօտութեանց նիւթ դառած են և փոքր՝ի շատէ ապացուցուած։ Ուստի զոցա միայն այստեղ մէջ բերելը մեզ իրաւունք կը համարեմք։

Ա. Գլխացաւ։ Գօքսօր Գէյլօմը այդ ցաւը ուղղակի անուանեց Ա-սոս-ծոքանական գլխացաւ։ որովհետև Նեվջատելի ուսումնարաններից մինում 731 աշակերտելոց մէջ 296-ը այնէ՝ հարիւրին 40-ը, այդ գլխացաւին բռնուած էին։

Օրիորդները ենթարկուած էին այդ ցաւին առաւել քան թէ տղէքը։ Առաջինք ներկայացրին հարիւրին 51, երկրորդք՝ հարիւրին 28 միայն։ Ամենից շատ նեղութիւն էին կրում այդ ցաւէն մանուկ երեխաները։

Ռեկկեր բժիշկը նոյնպէս քննել էր 3569 աշակերտ երկու սեռից։ Մենք այս տեղ այդ երկուսի էլ ընդհանուր եզրակացութիւնքը բերենք՝ որպէս զի շատ չը ձանձրացնենք մեր ընթերցողին

Ըստ միոյն Դաղաքական ուսումնարաններում տղայոց մէջ փոքր դասատեղը աւելի են այդ ցաւին ենթարկուած. իսկ Գիմնազիոններում և բարձր օրիորդաց ուսումնարաններում՝ ընդհակառակն։ Ըստ միւսոյն՝ դուրս է գալի թէ՝ ուսման առաջին տարիքը այնքան գլխացաւ չեն պատճառում, որքան յետոյ՝ քանի աւելանայ դասերի թիւը, քանի մեծանայ մտաւորական պարապմանց սաստկութիւնը և պահանջը։ Նոյն գլխացաւին նպաստիչ է տեղի նեղուածքը, աշակերտաց շատութիւնը, և այլն։

Չը պէտք է մոռանանք այս տեղ մի այլ ևս հանգամանք յիշել, որից զուցէ մեծ կախում ունի գլխացաւի տարածուելը աշակերտաց մէջ։ Մեր խօսքն է երկաթեայ հնոցների մասին (երկաթէ փէչեր, սօբաներ) որ այժմ շատ են գործածում թէ՝ քաղաքներում և թէ՝ գիւղերում։ Դէվիլ և Տրօսթ Դաղղիացի բժիշկները աշխատում են ապացուցանել թէ՝ այդպիսի մի հնոցը երբ կասկարմրում է, նորա երկաթեայ պատերը տաքութիւնից անօսրանում են, և հնոցում առաջ եկած օդակերպութիւնը, որոնց մէջ է և ածխաթթուն (օքսիդը), անընտրելի կերպիւ քամուում են և խառնուում սենեկի օդին։ Եւ ոչ չը գիտէ այդ ածխոյ օքսիդի ամենատիպը ներգործութեան ցնտակար հետևանքը մարմնոյ վերայ — գլխացաւ և պոռոյտ, գունաթափութիւն, ուշագնացութիւն, երբեմն դող և այլ երևոյթներ, որ ամենը նկատում ենք, երբ մի որևիցէ փակ և գոց կամ օդ չը բանող տեղում՝ լաւ չը վառած ածուխ է մնում, որից և արտադրվում է յիշեալ օդակերպը։ Հիմայ մնում է վիճակագրական կերպիւ վաւերացնել՝ թէ գլխացաւը ոչպիսի արդեօք համեմատութեամբ կամ ոչքան մասը կարելի է երկաթէ հնոցներին վերագրել։

Օյդման բժիշկը գրում է թէ՝ իւր բնակած նահանգում, ուր մեծ գործածութեան մէջ են և շատ սովորական երկաթէ հը-

նոցները՝ ածխաջրածնի ներգործութիւնից յառաջ եկած յարատև թունաւորութեանց դէպքերը շատ յաճախ են։

Ա. Վ.ՐԻՑ ԱՐԻՒՆ-ՆԱՀՈՍՈՒՆ։ Գիտնականը պնդում է թէ՝ քթից արիւն գալը շատ սուղ չէ աշակերտաց մէջ. 155 աշակերտներից 21-ը այդ ախտութիւնն ունէին. աղջիկների մէջ աւելի էր (22%), քան թէ տղաների մէջ (20%)։ Առաջինների համար այդ ախտութիւնը պակասում էր դասատուները փոխելուն համեմատ. երկրորդաց համար՝ այդպէս մի կանոն չէր նկատվում։ Ուսկիների թուերը մի փոքր կը զանազանին, բայց նորա թուերը ճիշդ չեն։ Ուստի մենք կը բերենք միայն նորա ընդհանուր եզրակացութիւնը. այս է թէ՝ քթի արիւնը այնտեղ էր յաճախ, ուր աշակերտները սոխոտուած էին օրուայ մեծ մասը դասատուներում մնալով անցնել, և շարժողութիւն չունէին աղատ օդի մէջ,

Գ. ԵԼԼԵՐ ՊՈՐԱՆՈՒՆ[1]։ Այս ցաւը Հայաստանում դժուար թէ պատահի, և մեզ էլ անծանօթ է. ուստի մենք միայն անունը նշանակելով բաւականանանք։

Ա. Հատարակ այս ցաւի հանգամանքները կարօտ են դեռ ևս ճիշդ բժշկական քննութեան։ Այն ինչ՝ զլխացաւը և քթի արիւնահոսութիւնը թէ՝ բժշկաց և թէ՝ ծնողաց շատերին արդէն յայտնի են, իբրև ուսումնարանական կեանքի հետադեպները։ Ի հարկէ, դոցա համար ևս կարօտութիւն կայ առաւել բազմաթիւ դիտողութեանց, որպէս զի մեր եզրակացութիւնքը միանգամայն վճռողական և անկասկած լինին։ Շատ ցանկալի էր այս նպատակի դիտմամբ, որ բայի բժշկաց հետաքրքրութիւնքը, մեր ուսուցիչներն ևս բժշկաց ձեռնտուութեամբ իւրեանց աշակերտաց մէջ պատահած հիւանդութեանց դէպքերը չը դադարէին ամենայն անդամ նշանակելու. Իսկ եթէ աշակերտը տկար ժամանակ տանն է մնալու՝ խնդրել ծնողացը որ միշտ վարժապետին տեղեկութիւն տան ցաւի մասին։ Ի հարկէ պէտք է հասկացնել ծնողաց, թէ ինչ նշանակութիւն ունի այդ տեղեկութիւնը, որ սոքա չը լինի թէ խաբեն՝ ուրիշ պատճառներով և որդւոցը տունը պահելու համար։ Այդ դէպքերը դարձեալ պէտք է նշանակել ամենը իւր բոլոր պարագաներով, և համեմատաբար, այսինքն միշտ միա դարձնել ուսումնարանի տեղաւորութեանը, դասերի բաժանման կարգին, տարուայ եղանակին, բնակարանի տաքութեան (հնոցների) և օդափոխութեան (հողմատարների կամ վենտիլատորներ) վիճակին։ Առանձնապէս համեմատել իրարու զանազան դասատուները, ուսումնարանները և այլն։ Այսու ամենայնիւ մենք հիմայ ևս մեր գիտցածից պիտի ճշմարիտը խոստովանիմք, որ ուսումնարանը այդ ցաւերի տարածուելու և զօրանալուն բաւականին նպաստում է, և մի քանիսը իսկ ինքը իւր գոյէն է ծնուցանում։ Եւ եթէ ուսումնարանի այս զանցառութիւնքը մեր այժմեան ուսումնարանական թերի և վնասակար պարագաներին է կախած, ապա դոցա փոխելը և նորէն կարգադրելը ամենայն մտածող անձի սրբազան պարտականութիւններից մինը պէտք է լինի։

Այստեղ շատ հարկ էր մի փոքր խորհել այն խնդրոյ մասին՝ թէ այդ ցաւերը կամ հիւանդութիւնքը ինչ ազդեցութիւն ունին երեխայից մասնաւորական կեանքի վերայ։ Ընտարակոյս՝ այդպիսի ախտ (թէև անուշադիր ուսուցչին լաւ չը նկատուի) վիճակի մէջ՝ երեխայի հոգեկան դրութիւնը բաւա-

1) Վ.ալ ուռոյցք, հատ վիպ.

կանին աւելուած է լինում և առ հասարակ մարդս դժուարանում է երկար մնացելու և մնաւոր աշխատանք կատարելու, եթէ այսպիսի դրութիւնը յարատևում է. և երեխէն ստիպուած է իւր կարողութիւնից վեր աշխատանք վերցնելու, հարկաւ դորա հետևանքը պիտի լինի ուղեղի գործունէութեան բաւականին խանգարումը։

Մի քանի բժիշկներ հաստատում են մինչև անգամ թէ՝ ուսումնարանն է մեղաւոր, որ երեխաների մէջ սկսել է յառաջ գալ այնպիսի հոգեկան աւերումներ, որպէս է «յանկարծակի թալկացումն կամ լուսնոտութիւն», «Սուրբվ խտիկաքաւումը» (որ դժուարաբոյժ տկարութիւններից մին է), յետոյ վերջապէս հոգեկան հիւանդութիւնք կամ խելագարութիւնք։ (Այս բանը մանաւանդ պնդում է Գէյկրը)։

Այս մտքերը դեռ ևս իւրեանց տակ այն քան լծոմին փաստեր չունին. ուստի մեզ կընկնի այժմ միայն ընդհանրօրէն զգուշացնել ժողովրդին և մասնաւորապէս լինել թէ՝ «ահա այս բանի մէջ մեծ վտանգ կարող է լինել»։ Մինչև ցայժմ այդ վտանգը միայն այնպիսի երեխաների վերայ ենք նկատել, որոնց վերայ բացի յիշեալ ներգործող պատճառները կից են եղել և մարմնոյ պակասութիւններ և կամ առանձին տրամադրութիւնք կազմուածքի։ Ուստի զանազան հնտանեսոյ անձինք վճիռ են տուել նայելով թէ՝ այս և այն դիպուածում՝ ուսումնարանի զանցառութիւնքն են աւելի զօրեղ հանդիսացել, թէ՞ նոյն իսկ ժառանգական տրամադրութիւնը և երեխի թոյլ կազմուածքը։ Այսպիսի ժամանակ՝ շատ կարևոր կը լինի՝ ուշ դարձնել և ուսման եղանակին կամ մեթոդային, ուսուցիչների անձնական ազդեցութեանցը և նոցա ինչպէս երեխաների հետ վարմունքն[1]։

Մի այլ դէպ ժամանակի կը թողնենք Ուսումնարանի գլխաւոր զանցառութեանց մինի քննութիւնը, այնէ՝ աշակերտաց Ոշնաշրէ կրոս-Ռի-ն (մէջքի ծռուելը)։ Մանաւանդ շատ յաճախ պատահող Դէ կոչէ ծ-ռ-ելը, որ բժիշկները անուանում են «սքոլիոզ»։

ՁՈՒՑՆ ՀԱՐԱԶԱՏԻ

Հոգւոյս ցանկալի՝ քաղցրիկ Արարատ՝
Օրօրոց հայկայ հարազատ մանկանց,
Ասոնք անուանիցդ՝ որ զքեզ շրջապատ
Խիստ կը սարսեին տեղերումն իւրեանց։

Այդ ո՞ր չար ոգի մատն կամապաշտի
Գլխահար սատան՝ ձոխ փառաց բաղդին
Ցանկդ խլրատեց՝ միութիւնդ քակեց,
Ուրով թշնամիք քեզ հեշտ տիրեցին։

Ուստի ակամայ զաւակունք Հայկայ
Արտասուօք թողին հայրենիք ծաղկեայ,
Դէպ օտար երկիր՝ ցիր և ցան եղան.
Ուր և անձկանօք ցաղդ կան 'ի բացեայ։

---

(1) Շատ բարւոք կը լինէր, եթէ Թոյլ կազմուածքի տէր տղոց ամենեին ուսումնարան չուղարկէին մինչի 10—12 տարին։ Եւ ծնողք իրանք չափաւոր կերպիւ պարապէին կամ եթէ հնար կայ, վարժապետներին տուն հրաւիրէին։ Որովհետև, իրաւի, այդպիսեաց հետ, մանաւանդ մատաղահաս ժամանակ, շատ զգոյշ եւ ընթոյշ վարմունք է պէտք։ Իսկ ոմ յայտնի չէ, թէ մեր ուսումնարաններում շատ վարժապետներ երեխայից հետ տմարդօրէն եւ երբեմն միանգամայն դազանաբար վարուել գիտեն։ Ցաւն էն է որ հասարակութիւնն ինքն ևս արդարացնում է վարժապետաց այդպիսի վարմունքը, գանազան պապական առակաց սղալ թելադրութիւնով։